

ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գ. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՆԿԱՐԱՔԱԿԱՆ-ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԱՐԵՎԱԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1828 թվականին Արևելյան Հայաստանն անշատվեց իրանից և միացավ Ռուսաստանին Հայ ժողովրդի կյանքում նոր դարաշրջան սկսվեց:

Ռուսաստանին միանալու պահին Արևելյան Հայաստանը ծանր վիճակ էր ապրում: Բուժական հիմնարկների խսպառ բացակայության հետևանքով երկրում տիրող հակասանիտարական վիճակն ու հաճախակի համաճարակները լրացնում էին ֆեռագական իրանում Հայ ժողովրդի կյանքի անմխիթար պատկերը: Ամբողջ մարզում շկար և ոչ մի դիպլոմավոր բժիշկ: Բժշկության միակ ներկայացուցիչները, այսպես կոչված, «ժողովրդական» կամ «տեղական» բժիշկներն էին: Ճիշտ է, նրանց մեջ կային բավական փորձառուներն ու հմուտները, բայց դրանք աննշան թիվ էին կազմում:

Այդ կարդի բժիշկներից էր Գեորգ Տեր-Կարապետյանը, որը մարզում ուստական վարչության կազմակերպումից հետո ընդունվեց պետական ծառայության:

Հին հայկական բժշկության ավանդույթներով դաստիարակված այդ բժշկի գիտելիքների մասին պատկերացում կարող է տալ հետեւյալ փաստը. երիտասարդ կնոջ շախչախված աղդրոսկը Գեորգ Տեր-Կարապետյանը փոխարինել է շան աղդրոսկը: Հիվանդը լրիվ բուժվել է: Այս փաստը մի կողմից վկայում է հին հայկական դպրոցի ներկայացուցիչների գիտելիքների բարձր մակարդակի մասին, մյուս կողմից, ինչպես իրավացիորեն նշել է և. Ա. Հովհաննիսյանը, ապացուցում է, որ ուկրային հետերո-

պլաստիկայի վիրահատության առաջնությունը պատկանում է Հայ բժշկին:

Գ. Տեր-Կարապետյանը երկար տարիներ աշխատել է Երեւանում որպես քաղաքային և դատական բժիշկ և 1830 թ. ժամանակամատի դեմ ծավալված պայքարի ակտիվ մասնակիցներից է եղել:

Սակայն, ինչպես ասացինք, նման բժիշկների թիվը շատ չնշին էր, և բնակչությունը ստիպված էր մեծ մասամբ դիմել Հեքիմների օգնությանը կամ բուժվել ժողովրդակենցաղային բժշկության միջոցներով։ Մանկաբարձական օգնությունը բացառապես իրականացնում էին տատմայրերը։

Տեղական բնակչությանը բժշկական օգնություն ցույց տալու նպատակով, 1833 թվականին Պետերբուրգից հրամանով Հայաստան ուղարկվեց բժիշկ Ս. Գ. Լոռու-Մելիքյանը, երկու բուժակի և մեկ մանկաբարձուհու հետ¹, Յավոք, վերջինի անձի և գործունեության մասին մեզ ոչինչ հայտնի չէ։

Ինչպես վկայում է Ս. Գ. Լոռու-Մելիքյանի նամակագրությունը՝ Հոր՝ Թելավիի (Վրաստան) բնակիչ քահանա Գրիգորի հետ, 1882 թ. նա ընդունվել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը, մինչ այդ ուսանել է ականավոր բժիշկ Շահրիմանյանի և Հավանաբար իր Հոր՝ Գրիգորի մոտ, որը նույնպես տեղական բժիշկ էր։

Ս. Գ. Լոռու-Մելիքյանը դեռևս ուսանողական տարիներին՝ 1825 թ. գրել է Հայերեն մի բժշկարան, ուր կա գինեկոլոգիային նվիրված համառոտ բաժին²։ Բժշկարանը կազմելիս հեղինակն, անշուշտ, օգտագործել է ինչպես իր համալսարանական պրոֆեսորների դասախոսությունները, այնպես էլ հրատարակված հայ բժշկական գրականությունը։

Թեև Ս. Գ. Լոռու-Մելիքյանի աշխատության մեջ գինեկոլոգիայի բաժինը բավական համառոտ է, և լուսաբանվող հարցերը սահմանափակվում են կանացի մի քանի հիվանդությունների նկարագրությամբ, այնուամենայնիվ այն պատկերացում է տալիս ժամանակի գինեկոլոգիական գիտելիքների մասին։ Ս. Գ. Լոռու-Մելիքյանը շոշափել է գինեկոլոգիական ախտաբանության հետե-

¹ Ա. Ս. Կծոյան, Հայկական մարզի առաջին դիալոգավոր բժիշկ Ս. Լոռու-Մելիքյան (զեկուցված է Մատենադարանի 1950 թ. գիտական սեսիայում)։

² Այդ բժշկարանն այժմ պահպան է Երևանի բժշկական ինստիտուտի սոցիալական հիգիենայի և առողջապահության կազմակերպման ամբիոնում։

վլալ հարցերը. ամլություն, սկսված վիճում, դաշտանի գաղարեցում, օրիորդների և հղիների քլորող (դալկախտ), արգանդացին սպիտակաթորանք և այլն:

Քանի որ նշված բժշկարանը հետապնդել է զուտ բործնական նպատակներ, հիմնական ուշադրությունն ուղղված է հիվանդության բուժման հարցերին, բայց և հիվանդությունների պատճառապիտությանն ու ախտաբանությանը վերաբերող աղքատիկ ավլալներն էլ որոշ շափով բնորոշում են ժամանակի դինեկորողիայի վիճակն ու ուղղվածությունը:

Իրեն վերը նշված հիվանդությունների բուժամիջոց Ս. Գ. Լոռու-Մելիքյանն առաջարկում է արյունառություն, լուծողական և փսխեցնող միջոցներ: Արյունառությունը նա խորհուրդ է տալիս ամլության, դաշտանի հապաղման, առատ սպիտակաթորանքի և նույնիսկ սկսվող վիժման ժամանակ (եթե հիվանդը բավականաշափ ամրակազմ է): Որոշ դեպքերում (օրինակ՝ սպիտակաթորանքի ժամանակի) նա նպատակահարմար է գտնում տղրուկներով արյունառությունը դավակից կամ արտաքին սեռական օրգաններից:

Հետաքրքիր է հեղինակի մոտեցումը կանանց բուժման նկատմամբ: Անկախ պատճառներից, որոնց վրա զրեթե կանգ չի առնում, նա հիմնականում առաջարկում է դիետիկ և գինեկոլոգիական միջոցներ: Խորհուրդ է տալիս հաճախակի լինել մաքուր օդում, լնդունել զովացնող լողանք, սնվել միմիայն կաթնեղենով և բանջարեղենով: Եթե պատճառը կնոշ հոգեկան ճնշված վիճակն է, ապա անհրաժեշտ է բարեփոխել կենսապայմանները, զրաղեցնել և զվարճացնել նրան:

Ս. Գ. Լոռու-Մելիքյանի առաջարկած բուժամիջոցների վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին գինեկոլոգիական կոնսերվատիվ թերապիան որոշակիորեն հետ էր մնում գինեկոլոգիական վիրարուժությունից և մանկաբարձական վիրահատությունից, որոնք անառողջայի ասպարեզում ձեռք բերված նվաճումների շնորհիվ նկատելի առաջխաղացում էին ապրել:

Այդ ժամանակաշրջանում մանկաբարձությունը և գինեկոլոգիական գիտելիքները մուսաստանում զգալի հաջողությունների էին հասել: Այդ է վկայում հենց թեկուզ ակադեմիկոս Ի. Բուշի «Վիրարուժության դասավանդման ձեռնարկը», ուր շարադրված են գինեկոլոգիական և մանկաբարձական այլպիսի վիրահատու-

թյուններ, ինչպես կլասիկ և հեշտոցային կեսարյան հատումը, ծննդաբերության ժամանակ սիմֆիզեռառմիան, վիրահատությունը արգանդի դուրս ընկնելու ժամանակ, նրա հեռացումը և այլն³: Սակայն կոնսերվատիվ գինեկոլոգիայի ետ մնալը բնորությունը ոչ ուղարկան, այլև ժամանակի ողջ բժշկությանը:

Այդ մասին է վկայում մի այլ հայ հեղինակի՝ Միքայել Ռեստենի աշխատությունը, ուր շոշափվում են գինեկոլոգիական այն բոլոր հարցերը, որոնք տեղ էին գտել Լոռու-Մելիքյանի աշխատության մեջ:

Միքայել Ռեստենը (իսկական ազգանունը՝ Պատկանյան) բժշկական կրթությունը ստացել է Խտալիայում: Նրա «Բժշկականություն» աշխատությունը հրատարակվել է 1822 թ. Վենետիկում և վերահրատարակվել 1832 թ.⁴: Այն գրված է ժամանակի արևմտա-եվրոպական բժշկության վերջին նվաճումների հիման վրա (այդ են վկայում եվրոպական բժշկության ականավոր ներկայացուցիչների աշխատությունների հաճախակի հիշատակումները) և բավական պարզորդ պատկերացում է տալիս կանացի հիվանդությունների այդ ժամանակվա գիտելիքների մասին: Գիրքը լայն ճանաչում է գտել և Արևմտյան, և Արևելյան Հայաստանի բժիշկների շրջանում:

Ռեստենի ինչպես այս, այնպես էլ մյուս աշխատությունները XIX դարի առաջին կեսի հայկական բժշկական գրականության ամենից ուշագրավ երևույթն են:

Մեզ հետաքրքրող բնագավառում Ռեստենի հայացքների վրա կանգ առնենք ավելի հանգամանորեն: Կանացի հիվանդություններին նվիրված գիլսում Ռեստենը հիմնականում լուսաբանում է այն նույն հարցերը, որոնք տեղ էին գտել և Լոռու-Մելիքյանի աշխատության մեջ, բացառությամբ արգանդի բորբոքային հիվանդությունների, որը վերջինս բոլորովին չի շոշափել, մինչդեռ Ռեստենը դրանց բավականաշափ ծավալուն տեղ է հատկացրել:

Ինչպես երևում է Մ. Ռեստենի աշխատության նախաբանից և բովանդակությունից, հիվանդությունների հության մասին նրա տեսակետների հիմքում Ձռն Բրոռումի ուսմունքն է՝ օրգանիզմի սթենիկ և ասթենիկ վիճակների մասին, մի ուսմունք, որն այն

³ И. Буш, Руководство к преподаванию хирургии, ч. III, изд. 5, СПб., 1832.

⁴ Մ. Ռեստեն, Բժշկականություն, մասն Ա և Բ, Վենետիկ, 1832:

ժամանակ մեծ ճանաշում և շատ կողմնակիցներ ուներ Այդ ուսմունքի համաձայն, մարդու առողջ կամ հիվանդ լինելը կախված է օրգանիզմի վրա անընդհատ ներգրծող արտաքին և ներքին գրգռիչների (ցրտաթյուն, ջերմություն, սնունդ, խմիչք, հոգեկան գործոններ և այլն) ուժից և բանակից։ Հիվանդապին պրոցեսների էության նման բմբոնման պայմաններում, այդ դպրոցին հարող բժիշկները մեծ նշանակություն չեն տալիս հիվանդությունների ճշդրիտ ախտորշմանը նրանք առանձնացնում են նույնակերպ հիվանդությունների խմբեր Այսպես, Ռեստենի մոտ կանանց ներքին սեռական օրգանների սուր բորբոքումները միավորվում են «արգանդի բորբոքում» ընդհանուր անվան տակ Հատկանշական է, որ արգանդի բորբոքման վերաբերյալ Ռեստենի հայացքները թիւ են տարեկրվում միջնադարյան բժիշկների հայացքներից։ Արգանդի սուր բորբոքումների բաժինը շարադրելիս նա բավարարվում է սոսկ այդ հիվանդության «պատճառները և հատկանշները» նշելով։ Արգանդի բորբոքման թվարկված պատճառները վկայում են, որ նրա ժամանակի գինեկողոգիական միտքը, միջնադարյան տեսակետների համեմատ, մեծ առաջխաղացում չի ապրել Այսպես, արգանդի սուր բորբոքման պատճառները Ռեստենը համարում է դաշտանի խախտումը, սպիտակաթորանքի արտադրությունը, վիժումը, արգանդային արյունահոսությունը, արգանդի և այլ օրգանների թուլությունը, արգանդի տրավմատիկ վնասվածքները, կծու և շատ տաք կերակուրը, կարոտը, վախը և, վերջապես, որովայնի թաղանթի բորբոքումը, արգանդում մնացած ընկերքի կտորները, մեռած պտուղի ծննդարերությունը։

Ռեստենի աշխատությունից արգանդի սուր բորբոքմանը վերաբերող ստորև տրվող մի հատվածը վկայում է, որ նոր ժամանակի գինեկողոգիական ախտանշանաբանությունը թիւ էր տարբերվում միջնադարյան հայ բժիշկների պատկերացումներից (որոնց, ի դեպ, Ռեստենը ծանոթ չէր): «Նշանքն արգանդային բորբոքման՝ մարթին ճանաշիլ յուժգին ցրտոյ. յորմէ զհետ գայ ջերմութիւն կիզողական, անանդորրութիւն, և մոլեգնութիւն։ Եվ յետ այնորիկ ախտադին զգայ զցավ ինչ սաստիկ, խայթիչ և զարկողական ի մի կողմն արգանդի. երբեմն ցավն նուազի իբր ժամով ինչ. բայց յետ այնորիկ առաւելագոյն իմն սաստկութեամբ վերադառնայ միւս անգամ և, ճապաղի մինչև ի թիկնամէջս և ընդ այս ցավոյ միանդամայն ի վեր երեի այտուց ինչ կակուղ

ի ստորին որովայնն, և անտի անցանէ յարգանդն. զարկ բազկերակին ի սկզբան անդ լինի արագ, մեծ լի և կարմր յոտոյ հարկանէ մանր. անզօր և անհաւասար. ստինքն լինին ուսուցեալ կամ այտուցեալ:

Ախտակիրն զգայ զշորութիւն լեզուի, զծարավ սաստիկ, զփսիսախ զգլխացաւուին, և զնողկանս. ժայթքէ ստեազ զմազձս դառնագինս. և ժանգագոյնս. մեզն լինի երբեմն արգելական, անկայուն կարմրութիւն ինչ ի վեր երկի ի յերեսս»⁵:

Հատկանշական է, որ Ռեստենը գրեթե ոչինչ չի ասում սուլր բորբոքումների դեպքում կանանց ներքին սեռական օրգանների ախտաբանական-անատոմիական փոփոխությունների մասին: Նա միայն նշում է, որ բորբոքումը երբեմն կոշտ գոյացումներ է առաջացնում կոնքում կամ աճուկներում: Իսկ ծանր ծննդարերությունից, վիժումից, հետծննդարերական արտաթորանքից կամ ընկերքի կտորներից արգանդի դանդաղ մաքրվելու դեպքում առաջացած բորբոքումը նրա բնորոշմամբ ստանում է «նյարդային» (սեպտիկ) տենդի բնույթ: Հետևելով հակադիրը-հակադիրով բուժելու սկզբունքին, կոնքում կոշտ բորբոքային գոյացումների դեպքում նա խորհուրդ է տալիս օգտագործել փափկեցնող միջոցներ և կատարել ջերմային պրոցեդուրաներ, սպիտակաթորանքի դեպքում՝ թմրամիջոցներ, արտաթորանքի դանդաղ արտազատման դեպքում՝ արգանդի լվացում, դեղակլիզմա, արյունառություն, տվյալներ շեքի մասում:

Արգանդի լվացումից բացի Ռեստենի բուժման մեթոդները չեն տարրերվում միջնադարյան բժիշկների մեթոդներից. նույն ջերմախյուսը, տարրեր յուղերի և քսուկների ներշփումները, լոգանքները, հեշտոցային ողողումները տարրեր դեղանյութերով: Նոր չեն նաև նրա հայացքները կանանց սեռական ոլորտի ախտաբանական մյուս պրոցեսների մասին: Արգանդային սպիտակաթորանքը նա դիտում է ոչ թե որպես ախտանիշ, այլ անշատում որպես հիվանդության առանձին մի ձև, համարելով դա սովորական երևույթ քաղաքային ապրելակերպի և սննդի ռեժիմի համար:

Այնուհանդերձ, որոշ դեպքերում սպիտակաթորանքը նա բացատրում է կանանց ներքին սեռական օրգանների հիվանդություններով (օրինակ, արգանդի և նրա անոթների թուլություն),

⁵ Մ. Ռեստեն, Բժշկականություն, հ. Ա, էջ 111—112:

ինչպես նաև ստամոքսի հիվանդությամբ վերջին դեպքում, սննդի շմարսելու հետեանքով, օրգանիզմը անկարող է բաշխել սննդանդութերը մարմնի բոլոր օրգաններին, որի հետեանքով շմարսված հյութերը հավաքվում են արգանդի մոտ և այնտեղից արտաթորքվում: Արգանդային սպիտակաթորանքի գոյացման նման մեխանիզմը զբեթե լիովին համբնկնում է կանացի սեռական օրգանների հիվանդության վերաբերյալ միջնադարյան հայ հեղինակների հայացքներին: Այդ հիվանդության բուժման գործում նա մեծ դեր է հատկացնում սննդի ռեժիմին, խորհուրդ տալով հրաժարվել զրայի ուտելիթից, գործածել փսխեցնող և լուծողական միջոցներ, որպեսզի շմարսված հյութերը դուրս գան հիվանդի օրգանիզմից:

Որպես ընդհանուր կազմուրող բուժում, նա առաջարկում է շատ լինել մաքուր օգում, կատարել թեթև աշխատանք, իսկ տոնուսը բարձրացնող լավագույն միջոց համարում է խինինը:

Հայեցողական բնույթ ունեն շրերության վերաբերյալ Ռեստենի դատողությունները: Այդ հարցի շուրջը հայ միջնադարյան բժիշկների հայացքները, թերես ավելի ուշալ հիմք ունեն, քան Ռեստենինը: Օրինակ, կանանց ամլության հիմնական պատճառները նա համարում է շափից ավելի զիրությունը, հոգեկան ընկճածությունը, ընդհանուր թուլությունը, սեռական անժուժիալությունը և անառակությունը, յուղալի ուտելիքների և ողելից խմիչքների շարաշահումը, սիֆիլիսը, արգանդային սպիտակաթորանը, դաշտանի հապաղումը, արգանդային արյունահօսությունը:

Պետք է նշել, որ թեև Ռեստենը բավականին պարզ պատկերացում է ունեցել ֆալլոպյան փողի, ձվարանի պարկիկների, սպերմատոզոֆիդների և նրանց նշանակության մասին, այնուամենայնիվ ամլությունը չի կապում դրանց ախտաբանական փոփոխությունների հետ, այլ կանգ է առնում հիմնականում ընդհանուր կարգի պատճառների վրա: Սա զարմանալի չէ, եթե նկատի ունենանք, որ ախտաբանական անատոմիան և ֆիզիոլոգիան այն ժամանակ դեռևս արժանի տեղ չէին գրավում այլ բժշկական դիսցիպլինների շարքում:

Հետաքրքիր է, որ նրա կարծիքով ուներ դասսակարգի կանանց մեջ շրերությունը ավելի շատ է տարածված, քան շքավորների մոտ, որովհետև ի տարբերություն սրանց, առաջինները փափկասուն են և ֆիզիկական աշխատանքով չեն զրադվում: Այսպես, ամլությունը հետազոտելիս նա փորձում է հաշվի առնել նաև սոցիալական գործոնը:

Ինչպես Ռեստենի, այնպես էլ Հոռու-Մելիքյանի կարծիքով՝
ամլությունը պետք է բուժել բուսեղեն և կաթնեղեն կերակուրնե-
րով, զով լոգանքներով և այնպիսի դեղորայքով, ինչպիսին են-
շիքը, երկաթը, «դրակոնախեղը» և խինինը:

Քաղցկեղին նվիրված մանրամասն գլուխը, ուր զգալի տեղ
է հատկացված արգանդի քաղցկեղին, վկայում է, որ, եթե վերջի
նիս կլինիկական պատկերի մշակման և նրա բազմազան դրսե-
վորումների ուսումնասիրման գործում այդ շրջանի բժշկությունը
նախորդ դարերի համեմատ որոշակի առաջընթաց է ապրել, ապա-
պատճառագիտության և ախտաբանության բնագավառում շարու-
նակում է հենց հին հումորալ տեսության վրա:

Քաղցկեղը համարելով անբուժելի, Ռեստենը այնուամենայ-
նիվ գտնում է, որ սկզբնական շրջանում կարելի է բուժել, իբրև
բուժամիջոց առաջարկելով շիկացրած երկաթը և սնդիկի պրեպա-
րատները:

Մենք ավելորդ ենք համարում կանգ առնել Ռեստենի աշխա-
տանքում տեղ գտած կանացի ախտաբանության այլ հարցերի վրա
(ինչպես օրինակ «Նյարդային ծակոցները», վիժունները, հղի
կանանց և օրիորդների քլորոզը և այլն), քանի որ այստեղ նույն-
պես ոչ մի նոր բան չկա: Նշենք միայն, որ նա բացառիկ մեծ
նշանակություն է տալիս դաշտանի ֆունկցիային, համարելով, որ
կանայք դաշտանի ժամանակ հատկապես խոցելի են և հիվան-
դության նկատմամբ դյուրընկալ: Այդ կապակցությամբ նա-
բավականաշափ մանրաւասն կանգ է առնում կանանց ֆիզիոլո-
գիայի համար այդ «բնական և օգտավետ» պրոցեսի վրա:
Առանձնապես նշում է այն հիգիենիկ և նախազգուշական միջո-
ցառումները, որոնց կատարումով կարելի է խոսափել կանացի
հիվանդություններից:

Ընդգծելով, որ դաշտանը «բնական և օգտավետ» երևույթ է,
նա նշում է նրա գերը և նշանակությունը սերնդի վերարտադրման
ընթացքի համար: Տարօրինակ է, որ դե-Գրաաֆի, Գամի և
Լենհովի հայտնագործություններին ծանոթ Ռեստենը ենթադ-
րում էր, որ կանանց դաշտանը որևէ գեր է խաղում բեղմնավոր-
ման կամ հղիացման պրոցեսում: Այս սխալ ըմբռնման կողմնա-
կից էր ոչ միայն Ռեստենը:

Վերը նշված հայ հեղինակների աշխատությունների գիտական
արժեքը նրանցում տեղ գտած գաղափարների նորության և
ինքնատիպության տեսակետից մեծ չէ: Դրանք ուշագրավ են

նրանով, որ վկայում են ժամանակի առաջադիմ հայ բժշկական մտավորականության ձգությունների, փորձերի մասին՝ ժամանակակից գիտության հիման վրա վերականգնել հին հայկական բժշկությունը Այդ շրջանի բժշկական գործիչներն իրենց աշխատությունները զրում են զրարարով, ձգտելով վերականգնել հին հայկական բժշկական տերմինարանությունը և զուգընթացարար հայ բժշկական գրականության մեջ տեղ տալ նաև այն ժամանակի ընդունված լատինական բժշկական տերմինարանությանը:

Բժշկական գործի դրվածքը Հայկական մարզում մարդուն վարչության ստեղծման պահից, ինչպես և Խուսաստանի բոլոր ծայրամասերում, չեր կարելի փոքրիշատե բավարար համարել, թեև այն, ինչ արված էր այդ բնադրվածում իրանական տիրակալության շրջանի համեմատ, պետք է մեծ նվաճում համարել:

1828-ից մինչև 1833 թվականները բնակչությունն առաջվապես օգտվում էր միմիայն տեղական բժիշկների ծառայությունից, իսկ այդ շրջանում մոլեգնող համաճարակների (խողերա, ժանտախտ) գեմ պայքարը տանում էին զորամասային բժիշկները:

Մինչև 60-ական թվականների սկիզբը մենք չենք կարող նշել հայերներ գրված գրեթե ոչ մի բժշկական աշխատություն:

XIX դարի կեսի հայ իրականության մեջ չկար ոչ մի գիտնական կամ բնագետ, որը գիտական կենսարանության նկատմամբ ցուցաբերեր այնպիսի մեծ հետաքրքրություն, ինչպես Մ. Նալբանդյանը: Այդ հարցում ևս նա ուսւ հեղափոխական դեմոկրատների՝ Զերնիշեսկու, Գերցենի և Վեդինսկու մատերիալիստական հայացքների կողմնակիցն էր:

Իր կենսարանական հայացքներով Մ. Նալբանդյանը համոզված էվոլյուցիոնիստ է: Կենսարանական գիտություններից Մ. Նալբանդյանը առանձնապես բարձր էր գնահատում սաղմնաբանությունը, որի խոշոր արժեքը էվոլյուցիոն ուսմունքի համար նշել է Դարվինը: Հետաքրքրի է, որ ծանոթ չինելով այդ, իր արտահայտությամբ «մանկական» (այսինքն դեռևս ձևավորման շրջանում գտնվող) գիտության հետ, նա զարմանալի նախազգացումով կանխատեսել է նրա մեծ ապագան, հեղափոխական, սկզբունքային նշանակությունը կենսարանության համար:

Մի շարք հոգվածներով հանդես գալով Մոսկվայում հրատարակվող հայկական «Հյուսիսափայլ» ամսագրում, Մ. Նալբանդյանը անկասկած բարերար և հեղափոխիչ աղդեցություն ունեցավ հայ երիտասարդության վրա, վերջինիս ծանոթացնելով ժամանակի ուսւ առաջադեմ մատերիալիստական մտքին:

Յարական հշխանության քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների նկատմամբ միանդամայն անբարենպաստ էր ազգային լեզուներով մասնագիտական (այդ թվում և բժշկագիտական) գրականություն ստեղծելու համար։ Այդ է պատճառը, որ մինչև Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը հայերեն բժշկական աշխատություններն ունեն առավելապես գիտա-հանրամատչելի բնույթ, և նրանց հեղինակների հիմնական նպատակն է եղել բժշկական գիտելիքների տարածումը և հայկական բնակչության լայն խավերում սանիտարական-հիգիենիկ ուսակությունների պատվաստումը։

Գիտական բժշկության ժողովրդականացնող առաջին հայ բժիշկներից մեկը Մոսկվայի համալսարանի սան Դավիթ Ռոստոմյանն էր (1815—1868), որի գործունեությունը կապված էր Բաբվի հետ։ Լինելով ժամանակի ականավոր հասարակական գործիչներից մեկը, Դ. Ռոստոմյանը 1861—62 թթ. հայ պարերական մամուլում հանդես է եկել տարրեր թեմաների շուրջ գիտա-հանրամատչելի բժշկական հոդվածներով։ 1862 թ. այդ հոդվածները հրատարակվեցին առանձին գրքով «Հասարակական բժշկություն» ընդհանուր խորագրի տակ⁶։

Մեր թեմայի համար որոշ հետաքրքրություն է ներկայացնում նաև ժողովրդական բժիշկ Կարապետ Քոչարյանցի աշխատությունը։ Կ. Քոչարյանցը հայ հին բժշկության վերջին ներկայացուցիչներից մեկն է։ Նա չուներ բժշկական բարձրագույն կրթություն։ Բժշկություն սովորել է միջնադարյան հայ բժիշկների ստեղծագործություններից, միաժամանակ հետևելով, ինչպես վկայում է նրա աշխատությունը, ժամանակակից ոռոսական բժշկական գրականությանը։ Այդ է պատճառը, որ նրա աշխատության մեջ յուրովի զուգակցվում են նոր, առավելապես ոռոսական և հին հայկական բժշկության գաղափարները։

«Տանու բժիշկ կամ հասարակաց բժշկարան» վերնագիրը կրող այդ աշխատությունը լույս է տեսել 1863 թվականին Թիֆլիսում, որտեղ ապրել է Կ. Քոչարյանցը։ Աշխատության նախաբանում հեղինակը բավականաշատ պարզ ձևակերպել է այն նպատակները և խնդիրները, որոնք իրենց առջև դնում էին այդ շրջանի առաջադեմ հայ բժիշկները։ Քանի որ նախարանը որոշ իմաստով լուսաբանում է հին հայկական բժշկության վերջին ներկայա-

⁶ Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. IV, стр. 63.

ցուցչի գաղափարական ուղղվածությունն ու հասարակական տենդենցները, բերենք մի փոքր քաղվածք. «Այս աշխատութեանը ձևոր տալիս՝ ինձ նպատակ ընտրեցի զիմավորապես իմ գրուածքը օպտակար անել նրանց, որոնք բժշկի դիմելու միջոցներից զուրկ են. Այս նպատակավ ինձ առաջնորդ բռնելով սուսաց լեզուվ հրատարակուած հասարակաց բժշկարանները, աշխատեցայ, ամենից առաջառ բժշկարանիս լեզուի ոճը հասկանալի լինի ընդհանրապես նաև զիւղացի հայերու համար էլ, եւ երկրորդ՝ պատուիրած դեղերը ձեռաց ամեն տեղ ել ամէնի համար հեշտ ձեռք բերելու լինին...

Դորդէ, աւանդութիւնը եվ փորձը հասարակ ժողովրդեան մեջ առանց էն էլ տարածած ունի շատ տեսակ իսկական փրկարար ճար ու դարմաններ այլեւայ հիվանդութեանց և ցավերու դեմ, սակայն շատ եվ խիստ շատ անդամ անխիղն ու շահամոլ պառավ կանայք և մարդիկ հերիք չեն համարում իրանց պապից, կամ տատից սորված այս ինչ Մհեմը, այն ինչ Մաջանը եվ այս ինչ շապը պետք է ածել միայն այս ինչ, կամ այն ինչ ծանոթ հիվանդութեան վրայ. այլ՝ երր մեկ գեղով, պատահմամբ կամ հասկանալով, մեկ երկու հիւանդ լավացնում են էնդով համբավ են ստանում եվ այնուհետեւ արձակ համարձակ սեպհականում են իրանց հերիմի նուիրական պաշտոնը և եղան ու միամիտ ժողովուրդը եթէ էս դահիճներու ձեռովով իր հիվանդը «գերեզման է դրկում», պատճառը ճակատագիրն է տալիս»:

Այսուհետե հանգամանորեն նշելով տղիս հերիմների, գուշակողների և այլ «շառլատանների» պատճառած վնասը, Քոշարյանցը շարունակում է. «Ահա վերեվը լիշուած հանգամանքներից շարժելով համարձակեցայ այս Տանու բժիշկը ընծայել իմ սիրելի ազգի նեղացածներին:

Կմնայ ինչ եվ ամեն զերմեռանդ հայի փափագիլ, որ մեր հայազգի դիտնական և բաշահմուտ բժիշկները նուիրեն իրանց սիրելի ազգին բժշկականութեան այլ եվ այլ ճիւղերու վերայ առանձին առանձին գրվածքներ, որով ժողովուրդը կամաց կամաց կվարժուի հիվանդութեանց սկիզբը եվ պատճառը բնութեան օրենքներու մէջ փնտուի եվ ոչ թե իրան կեանքը սնապաշտութեանց խաղալիք դարձնելու⁷:

Ճիշտ գնահատելով բժշկական դիտելիքների մասսայականացան նշանակությունը սնութիապաշտության և նախապաշտ-

7 Կ. Քոշարյանց, Տանու բժիշկ կամ հասարակաց բժշկարան, էջ 4:

բումների դեմ պայքարի գործում, հեղինակը երևան չի հանում հետամնացության և տգիտության սոցիալական արմատները:

Կ. Քոշարյանցի աշխատությունը, որ նախատեսված էր ընթերցողների լայն շրջանների համար, գրված է ոչ թե գրաբառվ, որով գրում էին հայ բժիշկները մինչև XIX դարի 30—40-ական թվականները, այլ ինչպես և Ռուսությանի աշխատությունը, խոսակցական լեզվով:

Աշխատության մեջ արձարձված հարցերի առթիվ հեղինակի հայացքները առաջադիմական բնույթ են կրում:

Մանկաբարձության և գինեկոլոգիայի ասպարեզում Կ. Քոշարյանցի առաջադիմական հայացքների էությունն այն է, որ կանանց առողջության պահպանման և հիվանդությունների կանխման հիմնական պայմանը համարում է դաշտանի, հղիության, ծննդաբերության, հետծննդաբերական շրջանում որոշակի հիգիենիկ և նախազգուշական կանոնների պահպանումը։ Այդ կապակցությամբ, ի տարբերություն հին շրջանի բժիշկների, որոնք սովորաբար օգտվում էին դեղամիջոցների հարուստ պաշարից, նա համեմատաբար պակաս կարևորություն է տալիս դեղային թերապիային։ Այսպես, դաշտանի աննորմալ հապաղման դեպքում, որին նախորդ շրջանի բժիշկները, նույնիսկ նոր բժշկական դպրոցի ներկայացուցիչները կանանց հիվանդությունների առաջացման առումով մեծ նշանակություն էին տալիս, նա խորհուրդ չի տալիս դիմել դեղորայքին, համարելով այն ավելորդ և անօգուտ։ Նման դեպքերում նա նպատակահարմար է գտնում կիրառել բուժման ֆիզիկական մեթոդները և բարելավել կանանց կենցաղային և սանիտարական-հիգիենիկ պայմանները։ Հին հայկական բժշկության ներկայացուցիչներից առաջինը Կ. Քոշարյանցն է տվել նորմալ ծննդաբերության ընթացքի բավական մանրամասն նկարագիրը ճշգրիտ ու կոնկրետ ցուցումներով, թե ինչպես պետք է իրեն պահի ծննդկանը և սպասարկող անձնակազմը՝ ծննդաբերության տարրեր պահերին։

Թեև այն ժամանակ դեռևս մանրէաբանությունը չկար, բայց Քոշարյանցը ծննդաբերության, ինչպես նաև հետծննդաբերական շրջանի նորմալ ընթացքի ապահովման հիմնական պայմանը համարում է ծննդկանի հետ շփման մեջ մտնողների բացառիկ մաքրությունը։ Այդ, անկասկած, ոռուսական առաջավոր մանկարձական գիտության ազդեցության արդյունքն էր։

Ծննդաբերության և հետծննդաբերական շրջանի նորմալ ընթացքի դեպքում նա առաջարկում է խստորեն պահպանել

սպասողական մեթոդը, խորհուրդ տալով շշտապել Հեռացնել ընկերքը, բանի որ իր կարծիքով դա հաճախ առաջ է բերում արդանդային ուժեղ արյունահոսություն և հետծննդարերական ծանր հիվանդություններ Հետծննդարերական սեպտիկ հիվանդությունները նա անվանում է «արյան բորբոքում» (այդ հիվանդությունը մեստանք անվանում էր «նյարդային տենդ»), համարելով շատ ծանր բարդություն և տարրերելով այն ծննդահոսքի հապագումից առաջացող աենդից և «կաթնային տենդից» Հետծննդարերական բարդությունների բուժման նրա մեթոդները պարզ են և հիմնականում սահմանափակվում են համապատասխան սննդային ուժիմով, տարրեր չերմախյուսերով և հակատենդային դեղանյութերով:

Հետաքրքիր է, որ, եթե կանանց սեռական ապարատի ֆիզիոլոգիայի ախտարանության շարադրման մեջ նա դրեթե ամրողապես հետևում է ժամանակակից բժշկական գիտելիքներին, ապա թերապիայի բնագավառում առավելությունը տալիս է հին հայկական բուժամիջոցներին:

Հայ բժիշկների գործունեությունը առանձնապես արագ սկսեց զարդանալ 70-ական թվականներից հետո:

Թիֆլիսը և Բաքուն դառնում են խոշոր առևտրա-արդյունաբերական կենտրոններ. այստեղ զգալի դեր է խաղում հայկական բուժութապիան: 70-ական թվականներին թիֆլիսում բացվում են մի շարք պարրերական հրատարակություններ, որոնցում զգալի տեղ է հատկացվում բժշկության հարցերին:

XIX դարի վերջին տասնամյակներում աշխատած ոչ մեծ թվով բժիշկներից հիշատակության է արժանի Լոռն Տիգրանյանի անունը, որը երեսնյան բժիշկներից առաջինը հասարակական, գիտական և գիտամասսայական բժշկական նշանակալի գործունեություն է ծավալել: Երեսնյան առաջինը նա է մասնագիտացել մանկարարձության և զինեկոլոգիայի բնագավառում, թեև այդ ասպարեզում գիտամասսայական հողմածներից բացի, այլ աշխատություններ չի թողել:

Լոռն Տիգրանյանը ծնվել է 1842 թվականին. սկզբնական բժշկական կրթությունը ստացել է Դորպատում, այնուհետև, 1875 թվականին ավարտելով Պետերբուրգի բժշկական-վիրաբուժական ակադեմիան, աշխատանքի է ընդունվել Նադեժդինսկի ծննդատանը՝ մանկարարձության և զինեկոլոգիայի գծով մասնագիտա-

նալու նպատակով⁸: Այդ մասնագիտությունը և Տիգրանյանը ընտրել է իր ուսուցիչ, XIX դարի հոշակավոր ոռւս մանկաբարձ Կրասովսկու խորհուրդով: Նրա աշխատանքը նագեծդինսկի ծննդատանը ընդհատում է ոռւս-թուրքական պատերազմը, որին և. Տիգրանյանը մասնակցում է որպես զինվորական բժիշկ: Պատերազմի ավարտից հետո նա մշտական բնակություն է հաստատում Երևանում, որտեղ եռանդուն հասարակական-բը-ժըշկական գործունեություն է ծավալում: 1881 թվականին սկսում է հրատարակել «Առողջապահական թերթ» հանրամատչելի բը-ժըշկական ամսագիրը, որի աշխատանքներին մասնակցում են Անդրկովկասում ապրող մի շարք հայ բժիշկներ:

Մասնագիտությամբ լինելով մանկաբարձ-գինեկոլոգ, և. Տիգրանյանն իր ամսագրում մեծ ուշադրություն է նվիրում ման-կաբարձական գիտելիքների մասսայականացմանը և այդ բնագա-վառում սանիտարահիգիենիկ ուսակությունների պրոպագանդ-մանը: Մինչև 1883 թվականը հրատարակվող նրա ամսագրի գրեթե ամեն համարում լույս էին տեսնում իր կամ քեռու՝ թիֆլիսարնակ բժիշկ Ա. Ի. Խոանեսյանի հոդվածները, որոնք նվիրված էին մանկաբարձության տարրեր հարցերին, նորածնի սննդին (օրինակ՝ «Հղիության դիետետիկան», «Մայրական կաթով երեխային սնելու մասին», «Երեխայի արհեստական սնեցնելու մասին», «Ամուս-նության հիգիենայի նշանակությունը»):

և. Տիգրանյանի հոդվածները արտացոլում են արագ զարգա-ցող ոռւսական մանկաբարձական գիտության նվաճումները: Թեև այդ հոդվածները գիտա-հանրամատչելի բնույթ են կրում, բայց գիտականորեն մշակված են: Լավ տպագրություն են թողնում և Ա. Ի. Խոանեսյանի հոդվածները, որոնցում հանգամանորեն խոսվում է նորածնի սննդի մասին: Հոդվածները գերծ չեն որոշ թերություններից, որոնք բնորոշ են մինչմանրէաբանական դարաշրջանին: Հեղինակն այն կարծիքին է, օրինակ, որ նորածնի մոտ բլենորեյան առաջանում է սենյակի ծանր օդից⁹:

և. Տիգրանյանի բժշկական բառարանները հիմք հանդիսացան սովետական շրջանում նոր հայկական բժշկական տերմինաբա-նության ստեղծման համար:

Ցարական իշխանությունը նրա գործունեությունը վտանգա-վոր համարելով, նրան երեք տարով արտաքսում է Անդրկովկա-

⁸ Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. IV, стр. 66—67.

⁹ «Առողջապահական թերթ», Երևան, 1881—1883:

սից: Աբսորի ժամկեան ավարագիլուց հետո նա վերադառնում է երեան և զրազվում միայն բժշկական, առաջելապես մանկարարածական-դինեկոլոգիական գործունեությամբ, առանձին եռանդ շցուցարերելով հասարակական աշխատանքի նկատմամբ:
Երեանում է. Տիգրանյանի մանկարարածական-դինեկոլոգիական գործունեության մասին քիչ տեղեկություններ են պահպանվել: Բայց հազիվ թե այն ծավալուն լիներ, քանի որ 1888 թ. Հիմնադրված երեանի բաղաբային հիվանդանոցում մանկարարածական-դինեկոլոգիական մահճակալներ չկային: XX դարի սկզբում, 30 մահճակալանոց այդ հիվանդանոցում, որն ուներ հաստիքային մեկ մանկարարձուհի, ընդունում էին միայն ոչ նորմալ և բարդություններով ծննդաբերող կանանց: Մանկարարածական օգնությունը հիվանդանոցում նման դեպքերում ցուց էր տալիս է. Տիգրանյանը:

Այսպիսով, XIX դարի վերջին երկու տասնամյակներում է. Տիգրանյանը երեանի առաջին և միակ մասնագետ մանկարարածինեկոլոգն էր: Մյուս երկու խոշոր բաղաբաներում՝ Ալեքսանդրապոլում և Կարսում, չկար և ոչ մի մանկարարձ-դինեկոլոգ բժիշկ: Այս փաստը խոսում է ծննդոգնության այն անմխթար միճակի մասին, որ տիրում էր երեանի նահանգում և Կարսի մարզում, որտեղ բնակվում էր Անդրկովկասի հայ բնակչության մեծ մասը:

Գործի դրվածքը համեմատաբար լավ էր Անդրկովկասի վարչական կենտրոն Թիֆլիսում: Բայց այստեղ էլ մինչև 70-ական թվականների կեսերը չկար ոչ մի ծննդաբերական հիվանդանոց, իսկ մանկարարձության և դինեկոլոգիայի մասնագետները եղակի էին:

Սակայն 1850—60-ական թվականներից սկսած ուսուական բժշկության բնագավառում տեղի ունեցած արմատական տեղաշարժերը որոշակիորեն աղղեցին բժշկության զարգացման վրա Անդրկովկասում:

Բավական է հիշել, որ 1864 թվականին Թիֆլիսում հիմնադրվեց «Կովկասալան բժշկական ընկերությունը», որը չափազանց մեծ զեր խաղաց կովկասում բժշկագիտական մտքի և առողջապահության կազմակերպման գործում: Այդ ընկերությունը բավական արագ իր շուրջը միավորեց Անդրկովկասի բժշկական հասարակայնությանը, և դարձավ երկրամասի բժշկագիտական մտքի կենտրոնը:

Սկիզբ առնելով ուսուական բժշկության բուռն զարգացման արշալուսին և սերտորեն կապված լինելով Ռուսաստանի խոշոր

գիտական կենտրոնների հետ, Կովկասյան բժշկական ընկերությունն իր գոյության ավելի քան 50 տարվա ընթացքում հրատարակել է ընկերության անդամների հարյուրավոր գիտական աշխատություններ, դրանով իր ավանդը ներդնելով ռուսական բժշկության զարգացման մեջ:

Ընկերությունը որոշակի դեր է խաղացել Անդրկովկասում գիտական կադրեր պատրաստելու գործում, կադրեր, որոնք Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նպաստեցին բժշկության արագ զարգացմանը և առողջապահության սիստեմի կազմակերպմանը Անդրկովկասի երիտասարդ սովետական հանրապետություններում:

Ընկերությանը կից գործում էին հատուկ սեկցիաներ, որոնց նպատակն էր Կովկասի ազգային գործամասնությունների շրջաններում տարածել բժշկական գիտելիքներ:

Անդրկովկասում ծննդախնամության զարգացման և մանկաբարձական-գիմնեկոլոգիական կադրեր ստեղծելու գործում մեծ դեր խաղաց 1875 թվականին Թիֆլիսում Անդրկովկասյան մանկաբարձական ինստիտուտի ստեղծումը: Մինչ այդ, 1873 թվականին Կովկասում քաղաքացիական գերատեսչության բժշկական բաժնի կառավարիչ, բժշկության դոկտոր Ա. Ա. Ռեմերտի նախաձեռնությամբ Թիֆլիսում հիմնադրվել էր 12 մահճակալանոց ծննդատում, որին կից մանկաբարձական դպրոցի բացվելուց հետո հիմնարկն վերանվանվում է «Անդրկովկասյան Օլգինսկի մանկաբարձական ինստիտուտ»: Նրա կանոնադրությունը մշակված էր Ռուսաստանի այլ մանկաբարձական ինստիտուտների կանոնադրությունների հիման վրա:

Ինչպես նշվում է Ա. Ա. Ռեմերտի գեկուցագրում, հիմնարկի խնդիրն էր տեղացի կանանցից մանկաբարձուհիների պատրաստումը: Զեկուցագրում նշվում է, որ «տեղացի կանայք» մանկաբարձության արվեստում ստանալով անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, բնականաբար բնակչության շրջաններում վստահության կարժանանան և հետզհետե դուրս կմղեն մանկաբարձական կրթություն շունեցող տատմայրերի շահագործող դասակարգը»¹⁰:

Ինստիտուտի պաշտոնական տնօրենն էր համարվում Ա. Ա. Ռեմերտը, բայց փաստորեն այն ղեկավարում էր մանկաբարձության դասատու Ս. Ի. Անանովը: Սկզբնական շրջանում ինստի-

¹⁰ Г. Я. Арешев, Закавказский Ольгинский повивальныи институт, (Исторический очерк за сорок лет), Тифлис, 1914, стр. 24.

տուար հետելալ հաստիքներն ուներ, դիրեկտոր, մեկ դասատու, մեկ բժիշկ-ուսպետախոր, երկու մանկարարձունի և հանրակրթական առարկաների մեկ ուսուցչի: Գործունեության առաջին տարիների ժամանակակից է դատել հետելալ թվերով՝ 1873 թվականին ընդունվել են 19 ծննդյան, 1874-ին՝ 66, 1875-ին՝ 65, 1876-ին՝ 101 և այլն Մննդկանների թիվը տարեցտարի ավելանալով, 1912 թվականին, 40 մահճակալի պայմաններում, հասել է 2462-ին¹¹:

Անդրկովկասում այդ առաջին ծննդատան սկզբնական գործունեության ընթացքում ծննդկանների թվի ոչ մեծ լինելը մասամբ բացատրվում է անդական բնակչության համար այդ գործի նոր լինելով, մասամբ էլ, ինչպես այդ մասին վկայում է Ա. Ա. Ռեմերախ գեկուցագիրը, նրանով, որ ծննդատան կազմակերպումը սկզբում նպատակ է ունեցել սպասարկել բնակչության ամենակարիքավոր խավերին: Բայց, ժամանակի ընթացքում, գործի դրվածքի բարելավման շնորհիվ, հիմնարկը հեղինակություն և մեծ ճանաշում ստացավ բնակչության մեջ: 1882 թվականին նրան կից բացվում է գիննեկուղիական, իսկ 1898 թվականին՝ վարակիչ հիվանդությունների բաժանմունք, կլինիկական ախտորոշման լարորատորիա և դիաճերձարան:

Առաջին տասը տարիները՝ 1873—1883 թվականները, մանկարարձական ինստիտուտի գործունեության մինչհակասեպտիկ շրջանն են: Բնորոշելով այդ շրջանում բժշկի աշխատանքը ծննդարերական բաժանմունքում, Գ. Յ. Արեշյանը գրում է. «Էստականատեսների պատմածների, բժիշկը գալով ծննդկանի մոտ, անկախ այն բանից թե գրասենյակից է գալիս, տեսնդային հիվանդի մոտից, նույն այդ զգեստով, մատը իշեցնում էր հատուկ այդ նպատակի համար պատրաստված ձիթապաղի յուղով բաժակը և զննում կատարում: Միայն դրանից հետո էր լվանում ձեռքերը, այն էլ ձեթից մաքրվելու նպատակով: Գործիքների մանրէազերծման մասին ոչ ոք չէր մտածում: Գործիքները գործածությունից հետո լվանում էին ջրով, սրբում և զնում պահարանից: Անհրաժեշտության դեպքում դրանք վերցնում էին պահարանից և ուղղակի գործածում»¹²:

Վիճակը բարելավվում է 1883 թվականից սկսած, երբ ինստիտուտի մանկարարձական բաժանմունքի վարիչ Վ. է.

¹¹ Նույն տեղում, էջ 56, 69, 71:

¹² Նույն տեղում, էջ 69:

Կրուզենշտերնը գործածության մեջ է դնում կարբոլաթթու և սուլեմա: Այդ նորամուծությունը, որը նշանավորեց մանկաբարձական ինստիտուտի հակասեպտիկ շրջանի սկիզբը, առաջին իսկ ամիսներից զարմանալի արդյունքներ տվեց: Ծննդկանների սեպտիկ հիվանդությունների տոկոսը 29,1-ից իշավ մինչև 10,5-ի:

Ինչպես հայտնի է, լիստերովյան հակասեպտիկան Ռուսաստանում առաջին անգամ կիրառեց Պ. Պ. Պելեխինը 70-ական թվականների վերջին, բայց լայն տարածում ստացավ 1877—1878 թվականներին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Այն կիրառվեց նաև Կովկասյան ճակատում, ուստի և Անդրկովկասի բժիշկները հնարավորություն ունեցան տեսնելու նրա արդյունավետությունը Թիֆլիսի հոսպիտալներում:

Գ. Յա. Արեշյանի տվյալներով, ինստիտուտում սպիտակ խալաթներ սկսել են գործածել 1884 թվականից: Դա մի այնպիսի նորություն էր, որ նույնիսկ Մանկաբարձական ինստիտուտի ղերեկտոր Ա. Պ. Արտեմեր, մտցնելով այդ նորամուծությունը, հայտարարել է. «Մեզ վրա կծիծաղեն, բայց մենք այնուամենայ-նիվ պետք է խալաթ հագնենք»:

Է. Մ. Սորեստիանսկու (Վ. Է. Կրուզենշտերնի մահից հետո նա էր ստանձնել մանկաբարձական բաժանմունքի վարիչի պաշտոնը) անվան հետ է կապված ինստիտուտում հակասեպտիկ — ասեպտիկ շրջանի սկիզբը (1898): Այդ ուղղությամբ է. Մ. Մորեստիանսկու ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հետ-ծննդաբերական սեպտիկ հիվանդությունների տոկոսը իշավ մեկ-երկուսի:

Ինչպես տեսնում ենք, գիտության նորագույն նվաճումները Թիֆլիս էին հասնում որոշ ուշացումով (հայտնի է, որ Ն. Վ. Սկլիֆոսովսկին ստերիլ վիրակապը կիրառեց և վերքերը ստերիլ շրով լվանալ սկսեց գեռևս 80-ական թվականներին):

Ինստիտուտում բժշկական գործի դրվածքի բարելավմանն ու կատարելագործմանը զուգընթաց զարգանում է նաև գիտական ու մանկավարժական գործունեությունը: Այսպես, 1885 թվականին Մանկաբարձական ինստիտուտում կազմակերպվում է գիտական խորհրդակցություն՝ հատուկ մշակված կանոնադրությամբ, որը հաստատել էր ներքին գործերի մինիստրությունը: Այդ խորհրդակցություններում, որոնք պետք է հրավիրվեին ամիսը մեկ անգամ, և որոնց թույլատրվում էր քաղաքի այլ բուժհիմնարկների բժիշկների մասնակցությունը, գիտական ղեկուցումներ և հիմ-

նարկների բժշկական հաշվետվություններն էին լավում: Կարդացված աշխատությունները, զեկուցումները և հաշվետվությունները առաջին 7 տարվա՝ 1885—1891 թվականների ընթացքում սիստեմատիկորեն հրատարակվում էին առանձին պրակլներով:

Մանկարարձական ինստիտուտի այդ գիտական խորհրդակցությունները Գ. Յ. Արեշյանի կարծիքով կարելի է դիտել իրեն Ռուսաստանի առաջին մանկարարձական-դինեկոլոգիական ընկերություն, քանի որ Պետերբուրգի մանկարարձական-դինեկոլոգիական ընկերությունը հիմնադրվել էր 1886 թվականին, իսկ Կովկասյանը՝ 1885-ին:

Գիտական խորհրդակցության հրատարակությամբ լույս տեսած «Գիտական զրույցներ» վերնագրով ժողովածուից երեսում է, որ մանկարարձական ինստիտուտի բժիշկների աշխատությունները առավելապես կրում էին կլինիկական-ախտորոշման հետազոտությունների բնույթ կամ կազուիստական զեպքերի նկարագրություն էին և նախազգուշական միջցառումների ուսումնասիրություն՝ ուղղված մայրերի, մանուկների և հետավիրահատական մահացության անկմանը: Բայց կան նաև մանրադիտակացին և մանրաբանական բնույթի մի քանի աշխատություններ:

Ցոթ տարվա ընթացքում մանկարարձության ինստիտուտի «Գիտական զրույցներում» հրատարակվել է 57 զեկուցում, հաշվետվություններ, հազորդում և ոեֆերատ: Ինստիտուտի բժիշկների աշխատությունները տպագրվել են նաև Ռուսաստանի այլ բժշկական ամսագրերում:

Մասնավորապես 50 հոդված է տպագրվել Կովկասի բժշկական ընկերության աշխատություններում:

Մանկարարձական ինստիտուտի մյուս մեծ ծառայությունը մի քանի տասնամյակների ընթացքում ավլալ մասնագիտությամբ բժիշկների և մանկարարձությների կազորերի պատրաստումն էր: Դարեր շարունակ իրանի և թուրքիայի լծի տակ եղած Անդրկովկասի ժողովուրդներն ընտելացել էին բուժօգնություն ստանալ տատմայրերից, հերիմներից ու կրթություն չունեցող այլ անձանցից և սկզբնական շրջանում առանձին վստահություն շէին տածում դիպլոմավոր բժիշկների և մանկարարձությների նկատմամբ: Մանկարարձական ինստիտուտի առաջին զեկավարներից մեկը՝ Ս. Ի. Անանովը, հետևյալ կերպ է բնութագրել մանկարարձության վիճակը Անդրկովկասում. «Ընդամենը 10—15 տարի առաջ դինեկոլոգիայով զրադվող բժիշկները ոչ միայն շէին կարող

մտածել այս կամ այն լուրջ վիրահատության մասին, այլև կանանց մանրագնին քննումը և զննումը կապված էին մեծ դժվարությունների և արգելքների հետ: Բուժումը կենտրոնացված էր գինեկոլոգիայի մեջ փորձ շունեցող մանկաբարձուհների ձեռքում, ըստ որում հիվանդի մոտ բժշկի գտնվելը միայն բրօգորտա էր, նա երբեք հիվանդին չէր զննում: Այսպիսով, հիվանդությունը որոշողը մանկաբարձուհն էր և նման quasi ախտորոշմանը համապատասխան էլ նշանակում էր ոչ մի իմաստ շունեցող թերապիան:

Ավելին, նույնիսկ մանկաբարձական վիրահատությունները, ինչպես, օրինակ, ունելիքի գործադրումը, միշտ դիմադրության էր հանդիպում տեղացի կանանց կողմից, և որքան ծննդկաններ գոհվեցին և այժմ էլ զոհվում են ուշացած վիրահատությունից, երբ հետաձգելը բոլորովին անհանդուրժելի է: Ինձ, ինչպես և շատ այլ բժիշկների, հայտնի են դեպքեր, երբ ծննդկանը շաղատված մեռել է, թույլ շտալով ավարտել ծնունդը վիրահատությամբ...

Այս կարգի փաստեր դիտվում են ոչ միայն հասարակ խավի ներկայացուցիչների մոտ, մի բան, որ այնքան էլ զարմանալի չէր լինի, այլև մտավորականների շրջանում, որոնք հաճախ նախապատվությունը տալիս էին ոչ թե փորձառու բժշկին, այլ հեքիմին: Այսպիսով, եթե տեղաբնիկները անհոժար են համաձայնվում մանկաբարձական օժանդակությանը, ապա պետք է պատկերացնել, թե ինչպես են վերաբերվում գինեկոլոգիական վիրահատությանը: Հենց միայն «վիրահատություն» բառը լսելիս տեղացի կանայք արագորեն հեռանում են բժշկի մոտից, վախենալով, որ խոսքին կհետևի գործը¹³:

Փաստերը վկայում են, որ գինեկոլոգիական հիվանդների մեծ մասը հիվանդանոց էր ընդունվում անդրկովկասյան նահանգներից, ուր քաղաքային հիվանդանոցներին կից հատուկ գինեկոլոգիական բաժանմունքներ չկային: Նման հիվանդները մանկաբարձության ինստիտուտ էին դիմում առավելապես գինեկոլոգիական-վիրաբուժական օգնության համար: Ինչ վերաբերվում է մանկաբարձական օգնությանը, ապա այն իրականացվում էր հիմնականում տեղում, մանկաբարձուհների կողմից, որոնք պատրաստվել էին մանկաբարձական ինստիտուտում: Սակայն նրանց թիվը բավականաշատ դանդաղ էր աճում, և Հայաստանի գյուղական վայրե-

¹³ Նույն տեղում, էջ 109:

րում մանկարարձունու տեղը հաճախ թափուր էր մնում: Պատճառն այն էր, որ հայուհիների մեջ մանկարարձությանը տիրապետել ցանկացողների թիվը շատ փոքր էր, և դրա հետևանքով Երևանի նահանգի բժշկական անձնակազմում XIX դարի վերջին և XX դարի սկզբներին հայ բժիշկների թիվն ավելի մեծ էր, քան հայ մանկարարձուհիներինը (տատմայրեր): Այսպես, 1890 թվականին նահանգում աշխատում էր ընդամենը 15 բժիշկ, որից 4-ը՝ հայ և 8 մանկարարձուհի՝ բոլորն էլ ուուաւ 1897 թվականին 17 բժիշկներից 8-ը հայեր էին, իսկ 8 մանկարարձուհիների մեջ չկար ոչ մի հայ: 1910 թվականին 25 բժիշկներից՝ 13-ն են հայ, իսկ 13 մանկարարձուհիներից՝ չորսը՝ Վերջապես, 1914 թվականին պետական ծառայության մեջ գտնվող 29 բժիշկներից 17-ն էր հայ, 19 մանկարարձուհիներից՝ 7-ը¹⁴:

Հայ մանկարարձուհիների թվի դանդաղ աճը բացատրվում է նրանով, որ մանկարարձական ինստիտուտում դասավանդումը կատարվում էր ուսւերեն լեզվով: Այդ էր պատճառը, որ ոսւաշակերտուհիների թիվը միշտ գերիշխող էր վրացուհիների, հայուհիների և աղբբեշանուհիների ու կովկասյան այլ ազգությունների նկատմամբ, մինչդեռ ազգային կադրերի կարիքը միշտ բավականաշատ մեծ էր: Այսպես, «Առողջապահիկ թերթում» (1905 թ.) հրատարակված «Մանկարարձուհիներ դյուլերի համար» հոդվածում մոռայլ գույներով է նկարադրվում Անդրկովկասում և, մասնավորապես, հայ բնակչության շրջաններում մանկարարձական օգնության վիճակը: Հոդվածագրի տվյալներով որակյալ մանկարարձական օգնություն, այն էլ աննշան չափով ստանում էին միայն գավառական կենտրոնները և մերձակա գյուղերը: Բնակչության գերակշռող մասը օգտվում էր տգետ տատմայրերի ծառայություններից: Իսկապես, ինչ որակյալ, լուրջ մանկարարձական օգնության մասին կարող էր խոսք լինել, եթե Երևանի նահանգում և Կարսի մարզում կար մեկ, լավագույն ղեպքում երկու մանկարարձուհի:

Հիմնականում նույն անմիտթար վիճակում էր գտնվում բժշկական, մասնավորապես մանկարարձական օգնությունը Ռուսաստանի բոլոր նահանգներում մինչև զեմստվոնների ստեղծումը:

Հայ բժշկության առաջադեմ գործիչները հուկս շղնելով ցարական ադմինիստրացիայի վրա, փորձում էին օգնություն

¹⁴ Кавказский календарь, Тифлис, 1892.

որոնել հայկական հասարակության մեջ։ Այսպես, «Առողջապահիկ թերթ» ամսագրի խմբագրությունը որոշում է միջոցներ հավաքել՝ գյուղերում հայ կանանցից մանկաբարձուհիների կադրեր պատրաստելու համար։ Այդ նպատակով խմբագրությունը կոչով դիմում է հայ կանանց։ Նշելով, որ մեկ մանկաբարձուհի պատրաստելու համար անհրաժեշտ է ընդամենը 300 ռուբլի, կոչի հեղինակները հիշեցնում են, որ Կովկասի, Պարսկաստանի, Թուրքիայի գյուղերում և շատ քաղաքներում կանայք անօգնական վիճակում են. շատերը մեռնում են ծննդաբերությունից կամ ամրող կյանքը տառապում ծանր, անբուժելի կանացի հիվանդություններով։

Խմբագրությունը կոչ է անում բժշկի օգնությունից օգտվող քաղաքի կանանց հիշել գյուղում ապրող իրենց քույրերի մասին¹⁵։ Եվ ասես պատկերը լրացնելու համար խմբագրությունը ամսագրի էջերում զետեղում է Ելիզավետպոլի նահանգի գյուղերից մեկում ծննդաբերությունից հետո կնոջ մահվան հետեւյալ նկարագրությունը. «Մի կին, ծննդաբերությունից յետո, արեան սակավութիւնից ուշադնաց է լինում... Շրջապատողները միաձայն գոշում են, հալ տարավ, հալ տարավ, որոնցից ավելի փորձառուները յարձակուելով թշվառ զոհի վրա, սկսում են ապտակներով հարվածել, ականջները ոլորել, մատները կծոտել, մարմինը կմշտելով այս ու այն կողմը քաշքաշել, բարձրածայն կանչել, ճիշ աղաղակ բարձրացնել...»

Մի կին ներս է սլանում տուն և մի ահագին կուժ սառը ջուր միանդամից վրա բերում հիվանդի գլխին... Մեկը ճարակությամբ դուրս է խլում լճի միջից անբաղադրանք նորածնին և ազատում խեղդուելուց։ Երրորդը դրսում, լսելով այդ հարա հրոցը և տեղեկանալով բանի էութիւնը, մի կարճ սրածայր փայտ ձեռին ներս է վազում տուն և փայտը հիվանդի բերանը կոխելու ջանքեր է անում, իբր թե օդի ճանապարհ բանալու համար, ու մի ատամ կոտրելով, արիւնը բերանն է լցնում...»

...Մի կին որտեղից որ է մի քանի խողի մազ է ճարում և հիվանդի քթի տակ ծխում, երկրորդը մաքուր օդի կարոտ թոքերին վառողի ծուխ է մատակարարում, անդադար վառող փշտացնելով հիվանդի քթի առաջ։ Մեկը հիվանդի օձիքը պատռելով արագությամբ սառը հող է լցնում թիկունքը։ Հարվածների տակ հոգին

¹⁵ «Առողջապահիկ թերթ», Թիֆլիս, 1901, № 16, էջ 369։

ավանդում է հիվանդը, բայց դեռ շարունակում են ծնծել ու քաշքալել, մինչև հավաստիանում են նրա մահվան մասին»¹⁶:

«Առողջապահիկ թերթի» խմբագրության բարեղործական նախաճեռությունն ու այդ գործի միջոցառումները չեն կարող տիրող գրությունը էականորեն փոխել:

Մինչև 1919 թվականը երեանի նահանգում և Կարսի մարզում, մանկարարձական-դինեկոլոգիական բուժական հիմնարկների բացակայության հետևանքով չկային մանկարարձական-դինեկոլոգիական մասնագիտությամբ բժիշկները Հիվանդանոցներում մանկարարձական-դինեկոլոգիական օպնությունը ծանր դեպքերի ժամանակ ցույց էին տալիս այդ բնագավառում մասնագիտական պատրաստականություն շունեցող վիրաբույժը կամ ի այլ բժիշկի: Մինչեւ Անդրկովկասի մանկարարձական ինստիտուտը իր հիմնագրման օրից մինչև առաջին իմպերիալիստական պատերազմը բավականաշատի կազմեր է սպատրաստել:

Գ. Յ. Աբեշյանի «Անդրկովկասի Օլգինսկի մանկարարձական ինստիտուտը» աշխատության տվյալների համաձայն, մանկարարձական ինստիտուտում մանկարարձական-դինեկոլոգիական պատրաստություն ստացած ավելի քան 40 բժշկից 25-ը հայ էին, և սրանց մեջ կային Անդրկովկասի մի քանի բավական խոշոր ծննդաբերական հիմնարկների հիմնադիրներ:

Բավական է հիշատակել, որ նրանցից լավագույնը՝ բժշկության գոկտոր Ս. Ի. Անանովը, Անդրկովկասյան մանկարարձական ինստիտուտի հիմնագիրներից մեկն էր, իսկ այնուհետեւ երկար տարիներ նրա տնօրինը, միաժամանակ մի քանի տարի եղել է Կովկասյան բժշկական ընկերության նախագահ: Իրեւ Թիֆլիսի քաղաքային դումայի անդամ նա գործուն մասնակցություն է ունեցել հասարակական կյանքում, սերտորեն կապված էր և հայ իրականության հետ: Երկար տարիներ եղել է Անդրկովկասի ամենամեծ հայկական միջնակարգ ուսումնական հաստատության՝ Հովհաննյան դպրոցի անփոխիս հոգաբարձուն:

Մասնավոր ծննդանպաստ հիմնարկներ են ստեղծել Թիֆլիսում ժամանակի նշանավոր մանկարարձակություններ Ս. Շահպարոնյանը և Մ. Մկրտչյանը:

Սակայն նշված մասնագետները մշտապես բնակվում էին Անդրկովկասյան խոշոր քաղաքներում, հետամնաց երևանը նրանց

¹⁶ «Առողջապահիկ թերթ», 1905, № 5, էջ 118—119:

չէր գրավում: Այդ պատճառով նրանց գերը Հայաստանում ծը-նընդանպաստ գործի կազմակերպման մեջ մեծ չէր:

Սակայն պետք է ասել, որ վերը նշված մասնագետներից ոմանք հայ մյուս առաջադեմ թժիշկների հետ միասին, որոշակի դեր են խաղացել աշխատավորության շրջանում տարածելով մանկաբարձական գիտելիքներ: Այդ գիտելիքների մասսայականացման անհրաժեշտությունը հայկական բնակչության լայն շըրշաններում երևում է թեկուզ հենց այն փաստից, որ թեև XIX դարի վերջում և XX դարի սկզբում հայերը կազմում էին Թիֆլիսի բնակչության զգալի մասը, բայց Օլգինսկի մանկաբարձական ինստիտուտ ընդունվող հայերի թիվը միշտ ավելի պակաս էր, քան ոռուսներինը և վրացիներինը: Գ. Յա. Արեշյանի տվյալներով, հիմնարկի ստեղծման առաջին տասնամյակում ընդունված ծընընդկանները ըստ ազգության հետևյալ կերպ էին բաշխվում. ոռուսներ՝ 737, վրացիներ՝ 185, հայուհիներ՝ 42 և այլ ազգություններ՝ 202: 1901—1910 թվականների միշտ ընկած տասնամյակում ընդունվել են. ոռուսներ՝ 9389, վրացիներ՝ 5159, հայուհիներ՝ 4214, այլ ազգություններ՝ 2918¹⁷: (Նշենք, որ այդ տարիներին Թիֆլիսում ապրող ոռուսների թիվը երբեք չի գերազանցել հայերին կամ վրացիներին):

Սա բացատրվում է նրանով, որ հայ բուրժուազիայի (որը կազմում էր Թիֆլիսի բուրժուազիայի զգալի տոկոսը) կանանց մեծ մասը նախընտրում էր Ս. Շահպարոնյանի, Մ. Մկրտչյանի, Սոբեստիանսկու մասնավոր ծննդատները, որոնք ավելի բարեկարգ էին, քան մանկաբարձական ինստիտուտը, իսկ միշտ խավի հայուհիները մանկաբարձուհիների օգնությամբ ծննդաբերում էին տանը: Միանգամայն հասկանալի է ուրեմն հայ բժիշկների ձգտումը հայ բնակչության մեջ տարածել թժշկական գիտելիքներ և վստահություն ներշնչել գիտական մանկաբարձության ներկայացուցիչների նկատմամբ:

Այդ ուղղությամբ առանձնապես արդյունավետ գործունեություն ծավալեց «Առողջապահիկ թերթ»՝ ամենամոյա գիտահանրամատչելի թժշկական ամսագիրը (հրատարակվում էր հայերին լեզվով Թիֆլիսում), որը հիմնադրել էր հայ բժշկական հասարական ականավոր գործիչ Վ. Արծրունին (հետագայում նա դարձավ Երևանի համալսարանի բժշկական ֆակուլտետի անտոմիայի ամբիոնի վարիչը):

¹⁷ Г. Я. Арешев, Указ. соч. стр. 79.

վ. Մ. Արծրունին և ամսագրին աշխատակցող բժիշկներն ու հասարակական գործիչները բազ զիտակցում էին, որ ցարական իշխանության օրոք ազգային ուսումնական հաստատությունների բացակայության պայմաններում հայերեն լեզվով զիտական բժժշկական ամսագրի կամ մասնագիտական գրականության հրատարակումը անհնառները է և ոչ ոեար Ուստի խմբագրությունն իր հիմնական նպատակն էր համարում ընթերցող լայն զանգվածներին տալ բժշկական տարրական և գործնական զիտելիքներ:

Բժշկության տեսական ու գործնական տարրեր հարցերի շարրում զգալի տեղ էին գրավում հղուության, ձննդաբերության, հետաձննդի շրջանի հիգիենայի և պրոֆիլակտիկայի, ինչպես նաև մանուկների առողջության մասին հոդվածները Տպագրվում էին նաև բաղմաթիվ հոդվածներ՝ ուղղված կենցաղի ստվերությունների, տղիտության, հետամնացության ու մնահավատության, նախապաշարումների և հատկապես հերիմության դեմ:

Ամսագրում հրատարակված հոդվածների մասին որոշ պատկերացում կազմելու համար բերենք դրանցից մի քանիսի վերնագրերը. «Մայրը և զավակը», «Մայրը և մանուկը», «Մայրը և հիվանդ զավակը», «Հղիուության հիգիենան», «Հղիուությունը և ծննդաբերությունը», «Մայրը և ծծմայրը», «Կաթնազեղձերի մասին», «Ծծապտուկների ճարերի մասին» և այլն:

Այս հոդվածները մեծ մասսայականություն էին վայելում. Դրանք կարուում էին անգամ ամենախոռվ գլուզական վայրերում:

Ամսագրի մյուս դրական կողմն այն էր, որ զգալիորեն նպաստեց հայկական բժշկագիտական և մասնավորապես մանկարձական և զինեկոլոգիական տերմինարանության մշակմանը:

Սուածակեմ հայ բժիշկները որոշակի գեր խաղացին նաև հայերի համար առողջապահական պարտադիր միջոցառման կազմակերպման գործում, միջոցառում, որը հուզեց ողջ հայ հասարակությանը և թեժ բանավեճ առաջացրեց բժշկագիտական շրջաններում, արձագանք գտնելով պարբերական մասմուլում, մասնավորապես «Առողջապահիկ թերթի» էջերում: Խոսքը վերաբերում է ամուսնացողների բժշկական քննության մասին Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա-ի հրամանագրին: Այն հրապարակվեց 1904 թվականի նոյեմբերին, Աստրախանի թեմի եպիսկոպոսի միջնորդությամբ. վերջինս իր խնդրանքը պատճառաբանում էր ամուսինների վեներական հիվանդությունների հետևանքով ապահարզանի հաճախակի գեպերով: Հրամանագրի հիմնական նպա-

տակն էր վարակիչ, մասնավորապես վեներական, հիվանդություններով տառապող անձանց շխուլատրել ամուսնանալ, որպեսզի հիվանդությունը շփոխանցվի ժառանգաբար: Ամուսնացողների առողջության բարելավման հարցերը հայ պարբերական մամուլում լայն քննարկման ենթարկվեցին դեռևս մինչ կաթողիկոսի հրամանագրի հրապարակումը: Մամուլում այդ հարցի շուրջը հոգվածներով հանդես եկան բժիշկներ Շահպարոնյանը, Վ. Արծրունին, Վ. Ագասարովը, Խ. Խատիսովը, Ա. Շիյանը, Թաղավարյանը, Լ. Օհանջանովը, ազգագրագետ Ե. Լալայանը: Սա վկայում է այդ միջոցառմանը հայ հասարակական կարծիքի նախապատրաստված լինելու և հրամանագրի հրապարակման գործում այդ կարծիքի դրական գերի մասին:

Մինչամուսնական բժշկական քննության հարցը բազմիցու բարձրացվել է նաև արտասահմանյան մամուլում, սակայն մինչև 1904 թվականը այն դրական լուծում չէր ստացել: Միայն 1905 թվականին ինդիանայի նահանգում (ԱՄՆ) և 1909 թվականին Վաշինգտոնում հրապարակվեցին ամուսնացողների քննման օրենքները (Լ. Հովհաննիսյան, Ա. Ֆարմանյան): Այսպիսով, այդ միջոցառման առաջնությունը պատկանում է հայ հասարակությանը:

Ինչպես ասացինք, հրամանագիրը լայնորեն քննարկվեց մամուլում և բժշկագիտական շրջաններում: «Առողջապահիկ թերթը» ողջունելով այդ որոշումը, նշեց նաև նրա թերի կողմերը: Իր «Մի կարևոր որոշում» հոդվածում Վ. Արծրունին սխալ է համարում այն, որ բժշկական քննության պետք է ենթարկվեն միմիայն տղամարդիկ և մոտակա գյուղերի բնակիչները: Հոդվածագրի համոզմամբ ամուսնությունը պետք է արգելել ոչ միայն սիֆիլիսի, այլև թոքախտի, անբուժելի հոգեկան հիվանդությունների, ծնունդը արգելակող սեռական օրգանների արատների ժամանակի:

Հեղինակի կարծիքով, հրամանագրի հիմնական թերությունն այն է, որ այն պետք է իրագործեն հոգեռարականության ներկայացուցիչները: Նա առաջարկում էր այդ միջոցառումը օրինականացնել կառավարական որոշմամբ և տղամարդկանց հետ մեկտեղ քննության ենթարկել նաև կանանց:

Հստ երևութին, քննադատության և բժշկական հասարակայնության ազգեցության տակ էջմիածնի սինողը 1904 թվականի նոյեմբերի 29-ի լրացուցիչ հրամանագրով ամուսնության արգելումը տարածել է նաև թոքախտով հիվանդների վրա:

Հրամանագիրը քննարկվել է նաև Կովկասյան բժշկական ընկերությունում, ուր ուժանք դեմ են արտահայտվել հրամանագիրն, այլևայլ պատճառների հետ միասին նշելով, թե այդ միջոցառումը սահմանափակում է անձի պատառթյունը Սակայն հարցի ուսումնասիրության նպատակով բնարված հատուկ հանձնաժողովը անհրաժեշտ է համարում կենսադրել այդ միջոցառումը և համապետական մասշտարով օրինականացնել երկու սեսի անձանց բժշկական քննությունը։ Հանձնաժողովը առաջարկում է ամուսնությունը արդեմել անրուժելի հոգեկան և նյարդային հիվանդությունների, ինչպես նաև վարակիչ ու ժառանգական հիվանդությունների ժամանակ, ինչպիսին սիֆիլիսն է, թոքախտը, զինեմոլությունը և այլն։ Հանձնաժողովը կարծիքով ամուսնությունը կարելի է թույլ տալ հիվանդին բուժելուց հետո։

Ինքնըստինքիրան պարզ է, որ ամուսնացողների բժշկական քննությանը վերաբերվող 1904 թվականի հրամանագիրը նպատակ ունենալով հիմնականում զերծ պահել ապագա սերունդներին որոշ վարակիչ ու ժառանգական հիվանդություններից, որոնք կապիտալիստական հասարակության պայմաններում սոցիալական արժատաներ ունեին, չեր կարող թիշ թն շատ զգալի արդյունք տալ, որովհետև եկեղեցին անզոր էր վերացնել այդ արժատաները։

Հրամանագիրն ուշագրավ է սոսկ այնքանով, որ բնորոշում է հայ առաջավոր մտավորականության տրամադրություններն ու մզումները, որի Աննշան տակ էլ այն ընդունված էր։

Կարելի է համարձակորեն ասել, որ XX դարի սկզբին և ընդուակ մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը Հայաստանում (Երևանի նահանգում և Կարսի մարզում), նախորդ երկու տասնամյակների համեմատ մանկաբարձականգինեկողիական գործում զգալի փոփոխություններ տեղի չեն ունեցել։ Մանկաբարձական մասնագիտական կադրերի աճով պայմանավորված քանակական և որակական որոշ տեղաշարժերը, այն էլ առավելապես քաղաքներում, չին կարող էականորեն փոխել վիճակը։

Աննշան մի փոփոխություն ծննդանպաստ գործում տեղի ունեցավ 1904 թվականին մարտի 8-ի կանոնադրությունից հետո, որը նախատեսում էր ամեն գալառում, նահանգում և մարզում ունենալ ոչ թե մեկ, այլ երկու գյուղական հիվանդանոց, ըստ որում այդ հիվանդանոցների հաստիքում կար մանկաբարձուհի (բուժակ-մանկաբարձուհի), որը միաժամանակ պետք է կատարեր և հիվանդանոցի հանդերձապահուհու պարտականությունները։

Սակայն Կարսի մարզի և Երևանի նահանգի գավառներում այդ հիվանդանոցները բացվեցին 5—6 տարի ուշացումով:

Բայց քաղաքի և գյուղի հիվանդանոցներում մասնագիտացված մանկաբարձական մահճակալներ չկային, ուստի հիվանդանոց էին ընդունում այն կանանց, որոնք մանկաբարձական և գինեկողոգիական շտապ օգնության կարիք ունեին:

Առաջին իմպերիալիստական պատերազմին նախորդող տասնամյակում մենք չենք կարող նշել թե շատ զգալի տեղաշարժեր մանկաբարձական-գինեկողոգիական գիտահանրամատչելի գըրականության բնագավառում, բացառությամբ մի քանի հոդվածների, որ լուս էին տեսել մամուլում, մասնավորապես «Նոր առողջապահիկ թերթ» թժկական ամսագրում։ Այդ հոդվածները նվիրված էին մայրության և մանկության պահպանության հարցերին և նպատակ ունեին հայ ընթերցողին ծանոթացնել այդ բնագավառում ուսւական և արտասահմանյան թժկության նորագույն նվաճումների հետ։ Նախորդ երկու տասնամյակների համեմատ այդ շրջանի աշխատությունների սահմանափակ քանակը բացատրվում է նրանով, որ Ռուսաստանում 1905 թվականի հեղափոխությունից հետո տիրող ուսակցիան զգալիորեն դժվարացրեց ազգային լեզուներով գրականության հրատարակումը։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մանկաբարձական-գինեկողոգիական գրականությունը բոլորովին չի հրատարակվել, իսկ Կարսի մարզում և Երևանի նահանգում ստեղծված ծննդանապատ սիստեմը գրեթե լիովին վերացավ։

Ինպահմական գործողությունները, որոնք տարածվեցին ամբողջ Արևմտյան Հայաստանում, Կարսի մարզում և Երևանի նահանգի զգալի մասում, հայ ժողովրդի համար ողբերգական եղան։

1918—1919 թթ. գաշնակցական հանրապետության օրոք Հայաստանում գրությունը ամենակին շրաբելավվեց։ Միայն 1919 թվականի դեկտեմբերի վերջին առաջադեմ թժկական հասարակության նախաձեռնությամբ Երևանում առաջին քաղաքային հիվանդանոցին կից բացվեց դեռ ցարական իշխանության ժամանակ նախատեսված 12 մահճակալանոց ծննդաբերական բաժանմունքը, որը ղեկավարեց Գ. Յ. Արեշյանը։

1920 թվականի վերջին մանկաբարձական-գինեկողոգիական մահճակալների թիվը նախատեսված 40-ի փոխարեն հասավ 20-ի։ Այդ բաժանմունքի հաստիքը կազմված էր երկու թժկից, 4 ման-

կարարձուհուց և գ սանիտարից: Թաժանմունքը պետք է ծառայեր իրբեկ բազա մանկարարձական-բուժական դպրոցի համար, որը ձեռականորեն բացվեց 1920 թվականի փետրվարին, Սակայն դաշնակցական տիրապետության ժամանակ բաժանմունքն ախտիսի ծանր վիճակում էր գտնվում, որ նորմալ աշխատանքի մասին խոսր մինել չէր կարող:

1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո ազգային վերածննդի ճանապարհը բռնած հայ ժողովուրդը անսահման հնարավորություններ ստացավ տնտեսության, դիտության, գրականության և արվեստի զարգացման համար:

Մեր երկրում մայրության և մանկության նկատմամբ արտակարգ մեծ ուշադրության շնորհիվ մանկարարձական-դինեկորուգիական գործի զրածքը Սովետական Հայաստանում և ողջ Սովետական Միությունում պատմական կարճ ժամանակաշրջանում հասավ այնպիսի բարձր մակարդակի, որն անհնարին է որևէ այլ հասարակարգի պայմաններում:

Г. Г. АРУТИОНЯН

АКУШЕРСКО-ГИНЕКОЛОГИЧЕСКИЕ ЗНАНИЯ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В XIX И В НАЧАЛЕ XX ВВ.

Резюме

В статье изложены данные об уровне здравоохранения и о деятельности передовых врачей в Армении, начиная с 1828 г.—даты ее присоединения к России, открывшей новую эру в истории армянского народа.

В указанный период здравоохранение в Армении находилось на крайне низком уровне. Почти полностью отсутствовали медицинские учреждения и организации, из-за господствующей антисанитарии в стране свирепствовали эпидемии малярии, холеры, оспы, тифа и чумы. Во всем округе не было ни одного дипломированного врача, а дело здравоохранения находилось в руках народных, или так называемых местных врачей. Однако и их число было весьма небольшим. Акушерская помощь оказывалась лишь повитухами.

В статье приведены данные о деятельности передовых армянских врачей, сыгравших выдающуюся роль в санитарно-просветительской и лечебной областях, они боролись против

религиозных предрассудков, захарства, развивая практическую медицину в Армении, издавая научно-популярные и медицинские книги, журнал и газету. Среди них Геворг Тер-Карапетян, С. Лору-Меликянц, Микаэл Рестен, Карапет Кочарянц, Левон Тигранян, В. Арцруни.

Весьма значительной была деятельность некоторых общественных деятелей Армении в поле пропаганды за медицинское обследование вступающих в брак.

В ноябре 1904 года католикос Мкртич специальным указом армянской церкви ввел обязательное добрачное медицинское обследование. Это было прогрессивным явлением, имеющим своей целью оздоровление потомства. Небезынтересно отметить, что подобный закон в США (в штате Индиана) был принят в 1905 г.

Однако, несмотря на подобные мероприятия, общее состояние акушерства и гинекологии в Армении до Великой Октябрьской Социалистической Революции оставалось весьма неудовлетворительным. Это состояние ухудшилось в период первой мировой войны и господства дашнаков. Лишь в декабре 1919 г. благодаря инициативе и усилиям передовой армянской общественности при первой городской больнице в Эриване, было открыто родильное отделение на 12 коек, возглавляемое Г. Я. Арешевым. Однако, ввиду отсутствия элементарных удобств, оно вскоре прекратило свое существование. Деятельность этого отделения возобновилась лишь с 1920 г., после установления Советской власти в Армении. С этого времени открылась новая эпоха в охране материнства и младенчества в Армении.